ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը – Արթուր Մելիքյան.

2. Զբաղեցրած պաշտոնը - Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի անասնաբուժության վարչության պետի տեղակալ.

3. Գործուղման վայրը և ժամկետները – Բոսնիա և Հերցեգովինայի մայրաքաղաք Սարաևո, 2025 թվականի ապրիլի 2-5-ը ներառյալ.

4. Հրավիրող կողմը – Եվրոպական GF-TADs կազմակերպության գրասենյակ .

5. Գործուղման նպատակը – «Խոզերի աֆրիկյան ժանտախտի» փորձագետների մեկնարկային խմբի 24-րդ հանդիպում (SGE ASF24).

6. Քննարկված թեմաները (հարցերը) – Խոզերի աֆրիկյան ժանտախտի անասնահամաճարակային իրավիճակը մասնակից երկներում, հիվանդության ներթափանցման կանխմանը ուղղված միջոցառումների ներյակացում, հիվանդության բռնկման դեպքում պայքարի միջոցառումները:

7. Հանդիպումները, ելույթները – Մասնակից երկրների (Վրաստան, Ռուսաստանի Դաշնություն, Մոլդովա, ՈՒկրաինա, ԵՄ և Բալկանյան երկրներ) կողմից ներկայացվեցին ելույթներ՝ խոզերի աֆրիկյան ժանտախտի անասնահամաճարակային իրավիճակը, հիվանդության ներթափանցման կանխմանը ուղղված միջոցառումների և հիվանդության բռնկման դեպքում պայքարի միջոցառումների ներյակացում:

Մասնակից երկրներում, որպես հիվանդության ներթափանցման կանխմանը ուղղված միջոցառումներ իրականացվում են՝

- Վայրի և ընտանի խոզերի շճահետազոտություն PCR մեթոդով, հիվանդության հայտնաբերման դեպքում հիվանդության օջախը սահմանում են 3 կմ շառավղով, որտեղ իրականացվում է բոլոր խոզերի հարկադիր մորթ, դիակների ոչնչացում դիահրկիզարանում և տնտեսավարողներին պետության կողմից տրամադրվում է կենդանու գնի մինչև 70 % փոխհատուցում:

- Անտառներում վայրի խոզերի դիակների հայտնաբերում՝ անօդաչու թռչող սարքերով, հատուկ վարժեցված շների միջոցով, հավաքում և ոչնչացում:
- Մեխանիկական պատնեշների՝ մետաղական ցանցերի կիրառում վայրի խոզերի մուտքը համայնք արգելելու նպատակոտ:
- Պարբերաբար պրակտիկ վարժանքների, ուսուցումների անցկացում համայնքային անասնաբույժների և տեսուչների մասնակցությամբ:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Գործուղվող՝ Արթուր Մելիքյան

09.04.2024 թ.

(ստորագրությունը, ամսաթիվը)